ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Վեհափառ Կաթուղիկոսը Թիֆլիզից առաքուած սրբատառ կոնդակներով հաճել է հետևեալ տնօրէնութիւններն անել Մայր Աթոռիս համար։

Վանական կառավարութեան անդամներ են նշանակուած.

Նախագահ՝ Գերապ. Սարգիս Եպիսկոպոս (անդամ Սինոդի)։

Անդամներ՝ Արժանապ. Ղևոնդ վարդապետ և Թադէոս աբեղայ։

Տպարանական ժողովի անդամներ են նշանակուած.

Բարեշնորհ Եղնիկ և Կոմիտաս աբեղայք, որ պիտի գործեն Նախագահութեամբ նախկին Նախագահ Գերապատիւ Արիստակէս Եպիսկոպոս Դաւթեանի (անդամ Սինոդի)։

Ցանուն Սրբազան Նախագահի տուած կոնդակով Նորին Վեհափառութիւնը առանձին հրահանգներ ևս սահմանել է տպար. վարչութեան համար, որ տարբերուում են ցարդ իշխող կանոններից։ Այս առթիւ «Արարատ»ը բացատրութիւններ կը տայ առաջիկայում խօսելով Ս. Էջմիածնի անտեսական վարչութեան մասին։

—

Հին Նախիջևանի նախկին փոխանորդ արժանապ. Գրիգորիս վարդապետին Վեհ. Հայրապետն յատուկ կոնդակով հաճել է կարգել Տաթևի վանահայր, իսկ նախկին վանահայր արժանապ. Յովհաննէս վ. Շիրակունուն նշանակել է Գանձակի փոխանորդ ի տեղի արժանապ. Գարեգին վ. որ ժամանակաւոր կառավարիչ է նշանակուած Շուշու թեմի։

—

Ագարակի նախկին տեսուչ արժանապ. Անտոն վարդապետը նշանակուած է Գանձասարու վանահայր և կալուածոց տեսուչ, իսկ նրա փոխանակ այժմ ագարակի տեսուչ է կարգուած արժանապ. Գեղամ վարդապետը։

—

Վեհափառ Հայրապետի կոնդակի համաձայն կաթուղիկոսական տեղակալ ամենապ. Մեսրոպ Արքեպիսկոպոսը փետրուարի 26-ին Վաղարշապատու ս. Աստուածածնայ եկեղեցում առաւօտեան ժամերգութիւնից զինի վարդապետութեան աստիճան և գաւազան տուաւ բարեշն. Կարապետ, Բենիկ, Կոմիտաս, Եղնիկ և Թադէոս աբեղաներին։

Նոյն օրը ս. պատարագին՝ Հայրապետական հրամանով սարկաւագ ձեռնադրուեցան դպիր Ռափայէլ Մելիք-Ադամեանն և դպիր Մուշեղ Տէր Գաբրիէլեան։ երկոքեան ևս Գ. Ճեմարանի սաներ, որոնցից առաջինն այժմ Ճեմարանում պաշտօն է վարում, իսկ երկրորդը դեռ ևս ուսանող է։

—

Սրբոց Ղևոնդեանց քահանայից և Վարդանանց զօրավարաց տօները առանձին հանդիսով կատարուեցան այս տարի Գ. Ճեմարանում, ուր ներկայ էր և Մայր Աթոռիս միաբանութիւնը։

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԷՍ.

Մայր Աթոռիս տպարանը հրաւէր ստանալով մասնակցելու Պետերբուրգում կայանալիք տպարանական ցուցահանդէսին, Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտուութեամբ տպարանական վարչութիւնն ևս ցանկութիւն յայտնեց մասնակցելու և իսկոյն ցուցահանդէս ուղարկեց մինչև այժմ Ս. Էջմիածնում տպուած բոլոր գրքերի օրինակները։ Պետերբուրգի հայ ազգայիններից պ. Նիկողայոս Բերբերեանցը ամենայն պատրաստականութեամբ յանձն առաւ տպարանիս ներկայացուցիչ լինելն։ Այժմ պ. Ն. Բերբերեանը յայտնում է, որ փետրուար 19-ին. ցուցահանդէսը բացուել է։ Նորին Կ. Բ. Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչը ցուցահանդէսը բանալուց յետոյ իւր պըտոյտների ժամանակ կանգ է առել Մայր Աթոռիս դարանի (vetrine) առաջ և շատ հետաքրքրուել է մեծ մաշտոցներով և հայկական ձայնանիշներով (նօտ)։ Ցուցահանդիսին մասնակցող միակ հայ տպարանը—Մայր Աթոռինս է։

Ա. ՌՈՒՍԱՀԱՅՑԻ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

Հայրապետական սրբատառ կոնդակով Երևանի թեմի Փոխանորդի տեղակալ է նշանակուած Գեր. Անանիա Եպիսկոպոսն յատուկ հրահանգներով։

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԵՍՉԻ ՎԱՍՆ 1893—94 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻՈՅ

Մեր թեմական դպրանոցը անցեալ ուսումնական տարւոյ վերջը բոլորեց իւր երեքտասանամեայ գոյութեան շրջանը, և իւր մշտական ուսուցչական խմբովը կըշարունակէ ծառայել երջանկայիշատակ Հիմնադրի բարի ու վեհ նպատակին —այն է տեղւոյս հայ հասարակութեանը մէջ ուսման սերը արծարծելու ու մայրենի լեզուի և կրօնի ուսմունքը տարածելու։

Շատերուն գուցէ զարմանք թուի, որ ես այստեղ շեշտեցի մեր դպրոցի ուսուցչական խումբը ասելով, թէ նա մշտական է, այո, այդ ես արի գիտութեամբ, որովհետև դպրոցի բարգաւաճման ու յարատեւութեան գլխաւոր պայմաններէն մէկն պէտք է համարել ուսուցիչներու և դպրոցի մէջ եղած մշտական կապը, որը կարող է գոյութիւն ունենալ միայն այն դէպքում, եթէ ծառայողները տարիներու ընթացքում նուիրած լինեն իրենց մի և նոյն դպրոցական հիմնարկութեան, սերտ կապով կապուած լինեն նրա հետ և դպրոցի վարչութիւնը իւր կողմէն գնահատէ և խրախուսէ նոցա աշխատանքը ու ապահովէ նոցա վիճակը։ Ուսուցիչները չպիտի թափառին տեղէ տեղ, դպրոցէ դպրոց, ինչպէս վտարանդի դերասանական խմբեր՝ իրենց նիւթական ապրուստը գտնելու համար։ Նոքա պէտք է գիտնան, որ եթէ ծառայութեան մէջ ընդունուած են, ոչ ոք կարող չէ արձակել նոցա դպրոցէն առանց հիմնաւոր պատճառի, ոչ հոգաբարձութիւն և ոչ տեսուչ։ Նոքա պէտք է զերծ լինին կուսակցական շարժումներէ և պիտի ամբողջովին պատկանին այն հիմնարկութեանը, որի ծառայութեանը նուիրուած են։ Եթէ այդպէս լինի, մեր հայ դպրոցները կունենան իրենց մշտական ուսուցչական խմբերը, որոնց համար թանգ կլինին դպրոցի շահերը իսկ պատահական և բախտախնդիր ուսուցիչները այլ ևս գոյութիւն չեն ունենար նոցա մէջ։

ԳԱՐԱՊՄՈՒՆՔ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ.

Անցեալ ուսումնական տարւոյ մէջ ունեցած ենք ութը ուսուցչական ժողով, նուիրուած զանազան մանկավարժական հարցերու, որոնց մէջ առաջի տեղը բռնած է աշակերտներու յառաջադիմութեան խնդիրը։ Ցայտնի է, որ մեր դպրանոցական դասարաններու կոնտինգէնտը կըլրացուի նախակրթական դասարաններու աշակերտներովը, որովհետև ուղղակի դասարաններ մտնողներու թիւը շատ սահմանափակ է, հետևողաբար և ուսուցչական ժողովը առանձին ուշադրութիւն դարձրած է նախակրթարաններու կանոնաւոր կազմակերպութեանը վրայ, որովհետև նոքա հիմք են միւս դասարաններուն։ Պէտք է խոստովանել, որ վերջին տարիները նախակրթարանները ենթարկուած էին յաճախակի փոփոխութիւններու, ուսուցիչներու մահուան կամ յօժար կամքը արձակուելներուն պատճառաւ, որև մեծ ազդեցութիւն ունեցաւ աշակերտներուն պարապմունքներուն վերան։ Երկու տարի առաջ մեռաւ ստորին նախակրթարանի ուսուցիչ Խ. Ռոմանոսեանը, անցեալ տարի դուրս եկաւ ռուս լեզուի ուսուցիչ պ. Կ. Ալթունջին, այնպէս որ տարուան մէջ տեղը ստիպուեցանք նոքա դասերը բաժանել երկու ուսուցիչներու մէջ ժամանակաւորապէս—պ. Ս. Զաթալբաշեանի և բարձր դասարաններու ռուս լեզուի և գրականութեան ուսուցիչ Վ. Ե. Անտոնովի։ Որքան ալ նոքա բարեխղճաբար պարապեցան, կարելի չէր դարձեալ այն արդասիքը, որը կարող էր լինել, եթէ այդ դասերը կենդրոնացած լինէին մէկ ուսուցչի ձեռքում։ Վերջին հանգամանքը ի նկատ առնելով ուսուցչական ժողովը որոշեց այս տարի իւրաքանչիւր առարկայի համար ունենալ առանձին ուսուցիչ, որը պիտի տանէ նոցա միայն առաջին դասարանը։ Այդ իսկ նպատակով տարուան սկզբէն հրաւիրուեցաւ նախակրթարաններուն համար իբրև (առանձին) ռուս լեզուի ուսուցիչ Ստեփան Բագալեան Սմբատեան, որը աւարտած լինելով Երևանի ուսուցչական սեմինարիայում, կըվայելէ լիակատար ուսուցչութեան իրաւունք, առաջիկայ տարուանէ և հայ լեզուի դասերը պիտի անցնեն մէկ ուսուցչի ձեռք։ Ոչ պակաս գրաւեցին ուսուցչական ժողովի ուշադրութիւնը նաև դպրոցական դասարանները իրենց լայնածաւալ ընթացքովը։ Ամէն մէկ ժողովի մէջ կըլսուէին ուսուցչաց դժգոհութեան ձայները, թէ այս կամ առարկայէն կարելի չէ անցնել որոշեալ ծրագիրը, ժամանակի սղութեան և առարկաներու բազմութեան պատճառաւ, որով աշակերտները ուժերէն աւելի ծանրաբեռնուած են։ Սակայն ատոր առաջը առնելու մենք ապիկար ենք, քանի որ կապուած ենք կանոնագրութեամբ, որի միջէն կարելի չէ դուրս ձգել և ոչ մի առարկայ։ Կրմնայ ուրեմն մեզ գէթ այս վերջին անգամ բարձրացնել մեր ձայնը և խնդրել հոգաբարձութենէն, որ միջնորդէ ուր հարկն է, ևս մէկ դասարան բանալու, որ ըստ այնմ դասաւորուին առարկաները և նոցա ընթացքը իւրաքանչիւր դասարանի համար։ Եւ ոչ միայն այս քան, այլև կըհամարձակիմ այստեղ արծարծել և մէկ նոր հարց, որը հին է մեզ համար, այն է յոյն լեզուի դասաւանդութիւնը, որ երբեմն գոյութիւն ունէր մեր դպրանոցում որոշմամբ հոգաբարձու-

թեան, սակայն առանց սրբագործութեան և վաւերացման բարձր Հոգևոր իշխանութեան կողմանէ։ Ես այս հարցը կ'արծարծեմ անոր համար, որ ատոր պահանջը կտեսնեմ հասարակութեան մէջ. կ'ուզէին կլասիքական գիմնազիոն բանալ որը չյաջողուեցաւ, և բացի այդ ձգտումն կայ և մեր աշակերտներու մէջ գիմնազիոն մտնելու։ Մանաւանդ վերջին ժամանակները այդ աւելի նկատելի եղաւ։ Երբ բարձր դասարաններու աշակերտները, որոնց թիւը առանձին ալ սահմանափակ է։ հետզհետէ սկսեցին դուրս գալ հէնց այդ իսկ պատճառաբանութեամբ և պատրաստուելով մտան ոմանք գիմնազիոն։ ոմանք ալ կշարունակեն պատրաստուել։ Ըստ իս դանկալի էր ժողովրդին այդ պահանջի և ձգտման բաւականութիւն տալու համար մուծանել Հոգևոր իշխանութեան թոյլտուութեամբ և յոյն լեզուն։ որով միջոց տուած կրլինինք մեր աշակերտներէն ցանկացողներուն և համալսարան մտնել։

Ուռհասարակ պէտք է խոստովանել։ թէ դպրոցի յառաջադիմութեանը համար կան և շատ ուրիշ պայմաններ։ որոնք պէտք է մաղ թէ ուշ ի նկատ առնուին հոգաբարձութենէն։ Գոցամէն գլխաւորը պէտք է համարուի գիշերօթիկներու հարցի իրագործումը։ որի կարիքը մաղուց է կրզգացուի թէ մարչութենէն եթէ տեղւոյս և ամբողջ միճակի հայ ժողովրդի մէջ։ Ուելորդ կհամարիմ այստեղ պարզել այդ խնդրի կարևորութիւնը։ քանի որ նախնիներս տարիներուս դորա մասին երկարօրէն խոսած էի։ միայն այսքան կասեմ։ որ այլ ևս չէ կարելի յետաձգել դորա իրագործումը։ Ի դէպ՝ եթէ հոգաբարձութիւնը բարեհաճի տալ իր հաւանութիւնը։ ես պատրաստ եմ առաջարկել և պէտք եղած շտատը։

ԴՊՐԱՆՈՑԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ։

Դպրանոցի շինութիւնը ամէն կողմանէ համապատասխան է արդի առողջապահական պայմաններուն։ դասարանները լուսաւոր։ մեծ և բարձր։ մաքրութիւնը կարելի է համարել օրինակելի։ համաձայն թէ չկայ այն սովորական փոշին։ որ կրփչացնէ և աշակերտներուն և ուսուցիչներուն թոքերը։ օդը մաքուր ոչ թէ դասարաններուս։ հապա նաև բոլոր միւս սենեակներուս։ խաղալու սենեակը ընդարձակ։ լուսաւոր և այլն։

Դպրոցի միւս պարագաները համապատասխան են նորա փառաւոր շինութեանը։ ֆիզիքական թանգարանը օրինակելի է բոլոր այն գործիքներովը։ որ կարևոր են առարկայի դասաւանդութեան համար գիտութեան արդի պահանջներուն համեմատ։ Պէտք եղած գործիքները ևս հետզհետէ ձեռք կրերուին։ այնպէս որ այժմս կհամարուին մօտ 5000 բուրլու գործիքներ։ 150 կտոր Շվաբէի գործարանից ձեռք բերուած։ Տիեզերագրութեան վերաբերեալ պէտք եղած գործիքները ևս կան (5 կտոր) որպէս նաև աշխարհագրական և պատմական քարտէզներ։

ԴՊՐԱՆՈՑԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԵՒ ԳՐՔԵՐՈՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ։

Արժանի ու պէտք եղած ուշադրութիւնը դարձուած է նաև մատենադարանի վերայ։ որ կրաժանուի երկու մասի հիմնական և աշակերտական։ նշանակուած միայն աշակերտներու ընթերցանութեան համար։ որը կղեկավարուի իւրաքանչիւր դասարան՝ դասատիարակի հսկողութեամբ մատենադարանապետէն։ աջակցութեամբ հայ և ռուս լեզուի ուսուցիչներուն։

Տարէ տարի ձեռք կրերուին և նոր լոյս տեսած գրքեր թէ հիմնաւորի և թէ աշակերտականի համար։ այնպէս որ ներկայումս առաջինը կրաղկանայ 702 հատոր 539 անուն գրքերէ։ իսկ երկրորդը 448 հատորէ և 399 անուն։

Ընդամենը ընթերցանութեան համար աշակերտական մատենադարանէն առնուած է 1774 հատոր։

Այստեղ ես ինձ քաղցր պարտականութիւն կհամարիմ յայտնել իմ շնորհակալութիւնը մատենադարանապետ Ս. Զաթալբաշեանի։ որ մեծ եռանդով կվերաբերուի իւր ստանձնած պաշտօնին։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐՔԸ ՈՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ։

Վարքի ու յառաջադիմութեանը վերայ կը հսկեն թէ դպրոցում և թէ արտաքոյ դպրոցի ըստ կարելւոյն չափ դասատիարակները։ որոնք ի կարևոր դէպս առանձին հաղորդակցութիւն կունենան ծնողներուն հետ։ հրաւիրելով վերջիններու ուշադրութիւնը իրենց անուղղայ զաւակներու վերայ և խընդրելով նոցա աջակցութիւնը։ Ընդհանուր նպատակին հասնելու համար։ մէկ խօսքով ընդհանուր կապ կայ աշակերտներու ընտանիքի ու դպրոցին մէջ։ Դասատիարակները ոչ միայն իրենք կյաճախեն աշակերտներու տները և կգիտեն նոցա պարապմունքները։ այլ յաճախակի դպրոց կհրաւիրեն և ծնողներուն։ որ նոքա ականատես լինեն իրենց որդւոց այս կամ այն թերութիւններուն կամ կատարած յանցանքներուն և իրօք համոզուին վարչութեան նշանակած պատժի արդարութեանը մէջ։

Լաւ գիտնալով ու ճանաչելով։ թէ լոկ գիտութիւնը միայն չբաւի աշակերտին։ վարչութիւնս

կաշխատի կրթել և ազնուացնել նաև նոցա սիրտը, զարգացնել միտքը, որովհետև միայն այդ տեսակ ներդաշնակ կրթութեամբ կարելի է նոցամէն պատրաստել բարեկիրթ ու հասարակութեանը պիտանի անդամներ, Հէնց այդ իսկ նպատակով իւրաքանչիւր ազն օր և կիւրակի աշակերտները իրենց դաստիարակներու առաջնորդութեամբ խմբովին կ՚յաճախեն սուրբ եկեղեցի աղօթելու համար, որ նոցա սրտի մէջը պղտիկուց տպաւորի Աստուծոյ սէրը ու երկիւղը,

Ինչ որ կվերաբերի աշակերտներու պարապմունքներուն և ցոյց տուած յառաջադիմութիւններուն, ընդհանուր առմամբ պէտք է բաւարար համարել, Նայելով քննութիւններուն ցոյց տուած արդիւնքներուն, Ուսուցիչները ևս բարեխղճաբար կատարած են իրենց պարտաւորութիւնները. առանձին դէպքեր եղած չեն երկարատև բացակայութեան հիւանդութիւններու կամ ուրիշ պատճառաւ, այնպէս որ աշակերտներու պարապմունքը խանգարուած կամ դադրած չէր,

ԹԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ

	տարւոյն ընթացքը	արձակած ըստ կամաց	տարւոյն մէջ ըստ որոշման վարչութ.	տարւոյն վերջը	արձակած ըստ կամաց	տարւոյն վերջը ըստ որոշման վարչութ.	փոխադրած.	մնացեալ	թոշակ.	Զրիվրժ.
Ստորին նախկրթ.	41	»	»	41	1	»	38	2	22	19
Մէջին նախկրթ.	48	7	»	44	5	1	28	7	39	9
Բարձր նախկրթ.	46	4	»	42	5	3	23	11	33	13
I Դասարան	36	6	»	30	7	»	17	6	23	13
II Դասարան	20	8	3	17	5	2	7	3	10	10
III Դասարան	11	»	»	11	2	»	6	3	4	6
IV Դասարան	4	»	»	4	11	»	4	»	1	3
V Դասարան	6	»	»	6	1	»	4	1	4	2
VI Դասարան	4	»	»	4	»	»	4	»	1	3
	216	20	»	196	26	6	131	33	137	78

Ընդ ամենը եղած է անցեալ տարուան վերջը 196 աշակերտ որոնցէն 26 դուրս եկած են յօժար կամքը, 6 ըստ որոշման ուսուցչական ժողովոյ ծուլութեան ու վատ վարքի համար, մնացեալ 164 հոգիք ենթարկուած են քննութեան փոխադրուած են 131, մնացած 33 (այսինքն 20·19%),

Աւարտեցին իրենց ուսման ընթացքը 4 հոգի, որոնցմէն երկուքը կշարունակեն պարապել գիմնազիոնական ուսմամբ, մէկը կծառայէ տեղւոյս ծխական դպրոցներէն մէկուն մէջ իբրև ուսուցիչ, միւսն ալ նուիրելէ իրեն առևտրական պարապմունքի, Համեմատաբար ընդհանուրի թուին յօժար կամքը արձակուած են 13·25%, ըստ որոշման ժողովոյ մօտ 3%, մնացած 20·19%,

Անցեալ տարի դպրանոցի ուսուցչական խումբը Հոգաբարձութեան կանխօրէն տուած հաւանութեամբը, տօնեց իրեն բազմախոնջ անդամներէն մէկուն, այն է հայ լեզուի ուսուցիչ Գէորգ Ցարութիւնեան Խաչատրեանի 25 ամեայ ուսուցչութեան յօբելեանը, որին մասնակցեցին նաև դպրանոցի Հոգաբարձուները և ուրիշ դպրոցներու մէջ ծառայող հայ և ռուս ուսուցիչները և ուսուցչուհիները, մատուցանելով նորան պատշաճաւոր ուղղութիւններ թաւշապատ կազմով, իբրև խրախուսանք նորա և տրիտուր ծառայութեանը,

Այդ հանդէսը տեղի ունեցաւ թեմական դպրանոցի դահլիճում դեկտեմբերի 5 ին, նոյն օրը, երեկոյեան, ի պատիւ յօբելեարին ճաշկերոյթ եղաւ տեղւոյս վաճառականական ակմբում, որին մասնակցեցին բացի նորա ընկերներէն, նաև ցանկացողները նորա բարեկամներէն,

*

ՅՈՒՅԱԿ

ՊԱՇՏՕՆԵԻՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ ՎԻՃԱԿԻ ՎԱՍՆ 1893—94 ԱՄԻ։

Համար	Անուն, հայրանուն եւ ազգանուն	Ո՞ր ուսեալ	Ջի՞նչ տանողէ առարկայ.	Դասարան.	Ռուբլի.
1.	Գալուստ Կարապետեան Զարիֆեանց։	Ի Կայսերական համալսարանի լեզուագիտական բաժնի որ ի Մոսկ.	Տեսուչէ և աւանդէ զԼատին լեզու ի Գ.—Զ. դասարան.	12.	1800 720.
2.	Խաչատուր ա. քհ. Զարիֆեան.	Ի Լիկէոնի Լազարեան ճեմարանի.	Սրբազան պատմութիւն և կրօնագիտութիւն յԱ. Բ. և Գ դաս.	9.	540.
3.	Գէորգ Յարութիւնեան Խաչատրեան	Ի Լիկէոնի Լազարեան ճեմարանի.	Հայոց լեզու յԳ—Զ. դաս.	14.	940.
4.	Երուանդ Յովակիմեան Շահազիզ	Ի Լիկէոնի Լազարեան ճեմարանի	Հայոց լեզու յԱ—Բ. ընդհ. աշխարհ. և Հայոց պատմ. յԱ. Գ. դասարան.	10. 11.	1260.
5.	Իսահակ Սարգսեան Թանդեան.	Ի Կայսերական համալսարանի Մոսկ.	Ռուս. լեզու յԱ—Բ դաս. Գաղղիացւոց լեզ. յԲ—Զ.	10. 13.	1380.
6.	Վահան Գաբրիէլեան Քիրլեան.	Ի Լազարեան ճեմարան ի Մոսկ.	Լատին լեզու յԱ—Գ. դաս. ընդ. պատմ. յԳ—Զ. դաս.	9. 12.	1200.
7.	Յարութիւն Գրիգոր-Բայբուրթեան.	Ի Կայսերական համալսարանի Մոսկ.	Թուաբանութիւն յԱ—Բ դաս. բնական պատմութիւն Գ—Ե.	10. 2.	720.
8.	Յովակիմ Մանուկեան Թիքիճի Խամբուրեան.	Ի Կայսերական համալսարանի Մոսկ.	Մաթեմատ. յԳ—Զ. դաս. բնագիտութիւն և տիեզերագր. Ե—Զ.	18. 7.	1500
9.	Վասիլ Եւմինիչ Ռնտոնով.	Ի Կայսերական համալսարանի Մոսկ.	Ռուս լեզու յԳ—Զ. դաս. Աշխարհագր. և պատմ. Ռուս. Դ.	16. 3.	1140.
10.	Աբրահամ Յարութիւնեան Զամինեան.	Ի ճեմարանի Մայր Աթոռոյ.	Եկեղեց պատմ. Աստուածաբանութիւն և տեսութիւն գրականութեան Գ—Զ Հայոց լեզու բարձր բաժ. նախակրթ.	16 6	1200.
11.	Իվան Անդրէիչ Բախմուտսկի.	Ի վարժարանի Նկարչութեան ի Մոսկուա.	Գծագրութիւն յԱ—Բ. դաս.	5.	200.
12.	Մարգար դպ. Տէր Սարգսեան	Ի Խալիպ. ուսումնարանի.	Զայնագրութիւն և երգ. յԱ—Գ.	8.	280.
13.	Յովհաննէս սրկ. Զարիֆեան.	Ի ճեմարանի Մայր Աթոռոյ.	Կրօն ի նախակրթ և թուաբանութիւն.	21.	820.
14.	Յովհաննէս Նիկող. Քելլէ—Շահինեան	Ի ճեմարանի Մայր Աթոռոյ.	Հայ և Ռուս լեզ. իստոր բաժ. նախակրթ. և Հայ լեզ. միջին բաժ. նախակրթ.	15. 6.	780.
15.	Ստեփան Բետելեան Սմբատեան.	Ռուսուցչական Սեմինար. Երեւան.	Ռուս լեզ. միջին և բարձր նախակրթ	12.	480.
16.	Սերովբէ Քերովբեան Զաթալբաշեան.	Ի Թեմ. դպրան. Նախիջեւանայ.	Գեղագրութիւն նախակրթ Մատենագարանապետ վերակացու.	8.	240. 150. 300
17.	Մկրտիչ Տէր Թադէոսեան.	Ազգային Հոգեւոր դպր. Նուխուոյ.	Աւագ վերակացու.		400.
					16,050.

ՊԱՏԿԵՐ

ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ԴՈՒՄԱՐԱՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆԱՑ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՑ ՎԻՃԱԿԻ ՎԱՍՆ 1893-94 ՈՒՍՈՒՄՆ. ԱՄԻՆ։

	ՄՈՒՏՔ	Ռուբլի.	Կոպ.	Ռուբլի.	Կոպ
1.	Վարձ կալուածոց	5550	»		
2.	Նպաստ քաղաքական վարչութեան Ն. Նախիջևանի . .	6875	37		
3.	Նպաստ Եկեղեցեաց Ն. Նախիջևանի և գիւղօրէից . .	2275	»		
4.	Նպաստ Եկեղեցեաց Վիճակին	1045	»		
5.	Թոշակք աշակերտաց դասարանացն Դպրանոցի . . .	1256	»		
6.	Թոշակք աշակերտաց Նախակրթական դասարանաց . . .	2784	»		
7.	Տոկոսիք դրամոց	23	39		
8.	Մնացորդ ի հաշուոց Նախընթաց ամաց	18	91		
9.	Գին վաճառեալ գրենոյ ի մատենադարանէ Դպր. . . .	27	10		
10	Գումար փոխարինարար ստացեալ ի Նախագահէ Հոգաբարձութեան առ ի ծածկել զյաւելեալ ծախսն . . .	167	90		
		19 976	77		
	ԵԼՔ.				
1.	Թոշակք Տեսչի և ուսուցչաց			12420	»
2.	Թոշակք Մատենադարանապետի և վերակացուաց . . .			850	»
3.	Ծախք Նախակրթական երեք դասարանաց . . .			2660	»
4.	Ծախք տնտեսական.			1045	27
5.	Ծախք ուսումնականք			330	84
6	Ծախք ապահովութեան շինուածոյ Դպր. ի հրկիզութենէ .			104	70
7.	Վարձ ծառայից			546	80
8.	Թոշակք գործավարի Հոգաբարձութեան			500	»
9.	Ծախք Նորոգութեանց շինուածոյ Խալիպեան ուսումնարանի ի Թէոդոսիա			668	56
10	Գումար ի զեղչումն պարտուց առ գործարան Զիգելի . .			850	»
	Գումար.			19 976	17.

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ.

Վեհափառ Հայրապետը հաճել է յայտնել Սինոդին, որ Ինքը Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարիչ է նշանակել Նորընծայ Գերապ. Խորէն եպիսկոպոսին, Խորէն Սրբազանը ճանաչում է Աստրախանի թեմի ժողովրդի կարիքները, որովհետև այդ թեմում նա թեմական տեսչի պաշտօն է վարել։

Բ. ՏԱՃԿԱՀԱՅՑ.

—

—Ս. Յոհաննեան տօնի օրը Կ. Պոլսի պատրիարքի, Ամենապատիւ Իզմիրլեան արքեպիսկոպոսի կարգադրութեամբ բոլոր եկեղեցիներում կարդացուել է Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը, որը ինչպէս յայտնի է, նախկին պատրիարքի օրով իւր ժամանակին չէր կարդացուած։ Ինչպէս լրագիրներն հաղորդում են, այս ընթերցումը մեծ մխիթարութիւն է պատճառել թէ մայրաքաղաքի և թէ դաւառացի ժողովրդին։

—Կիւրակէ, յուն. 29-ին, Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում կարդացուել է Կ. Պոլսի պատրիարք Ամենապատիւ Իզմիրլեան արքեպիսկոպոսի անդրանիկ կոնդակը։

—Կ. Պոլսի գրեթէ բոլոր ազգային հաստատութիւնների անդամները ու երեսփոխանները—ընտրուել են արդէն։ Ուսումնական նորընտիր խորհրդոյ անդամներն են՝ պ. պ. Ռ. Պէրպէրեան, Յ. Ն. Մօստիշեան, Լ. Փաշայեան, Մ. Կիւրճեան, պ. Փափազեան, Վ. Մանուկեան եւ Յ. Էֆ. Հսպեան։

—Շաբաթ, փետ. 8-ին Խառն ժողովոյ մէջ կարդացուել է Վեհափառ Կաթուղիկոսի նամակը, որով Նորին Օծութիւնն ցաւ է յայտնում Սոյ Տ. Մկրտիչ Կաթուղիկոսին մահուան առթիւ և պատուիրում է, որպէս զի անհովիւ չմնայ այդ նշանաւոր վիճակը, անյապաղ ձեռնամուխ լինել յաջորդի ընտրութեան։

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի կողմից դաւառները շրջաբերական է ուղարկուած, որի իմաստը այս է. Պոլսոյ և դաւառներու մէջ սարկաւագի ձեռնադրութեան համար պէտք եղած հրամանը տրուում է Պոլսոյ կրօնական ժողովի կողմից։ Բայց Սիսի, Աղթամարի կաթուղիկոսները ու Երուսաղէմի պատրիարքը իրաւունք ունեն առանց Պոլսից հրաման առնելու իրենց հոգեւոր իրաւասութեան տակ գտնուած վիճակների և կամ վանքերի համար ձեռնադրութիւններ կատարել։ Սակայն պատահում է, որ եպիսկոպոսները սարկաւագ և վարդապետ են ձեռնադրում առանց հրաման ստանալու այն իշխանութիւնից, որից կախումն ունեն։ Շրջաբերականները հրաւիրում են առաջնորդներին և վանահայրերին, որ այս եկեղեցական կարգաւորութեան հաւատարմութեամբ հպատակեն։

Կ. Պոլսի Հայոց Խառն ժողովը իւր փետրուարի 8-ին արած նիստում ուշադրութեան է առել թափուր մնացած վիճակների հովուութեան խնդիրը և կրօնական ու քաղաքական ժողովներին առաջարկել է, որ նախաքննիչ մասնախումբերին յանձնարարեն՝ հաւաքական նիստում՝ ուսումնասիրել դրա պատճառները։

Կրօնական ժողովն իւր առաջին նստում վճռել է խնդրել Վեհ. Հայրապետի օրհնութիւնն իւր ձեռնարկութիւնների սկզբում։ Գովելի է կրօնական ժողովի այս ընթացքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ·

1. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ . Դ. Ա. . 43.
2. ՔԱՐՈԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ . Դ. Ա. . 44.
3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . Ն. Ք. . 48.
4. ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԱՆԱԿԱՆ . . . . 51.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ·

5. ԱՌԱՔՆԵՐ . . . . . Ս. Հայկունի . . 54.
6. Մի ՎՀԱՏԻՐ (Բանաստ.) } Յ. Յովհաննիսեան 55.
7. ՊԷՏԷՐՕՓԻՈՑ (Բանաստ.) }
8. ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ . . Ն. Քարամեանց 55.
9. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ Ի. ՀԱՄԼԷՏ . Յ. Յ. . 57.
10. Ի. ՀԱՅ ԼՐԱԳ. ՊԱՏՄ. Գ. Լեւոնեան 59.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ·

11. ՆՈՐ ՆԱԽԱՋ. ՈՒՍՈՒՄՆ. ԳՈՐԾԸ Ն. Շ. . 63.
12. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. . . . . 67.
13. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . . . . 67.

ԱԶԳԱՅԻՆ·

14. ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՊԱՐԳԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆ . . . . . Խմբագ. . . 68.
15 ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ . 70
1. ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . .
2. ՆՐԵՒԱՆԻ ԹԵՄ. . . . . .
3. ԲԵՍԱՐԱԲԻՈՑ ԹԵՄ. . . . . .
4. ԱՍՏՐԼԽԱՆԻ ԹԵՄ. . . . . .
5. ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . .

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ . . . . . .
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . .

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ·

Աբարատի Գործակալներին՝

Խմբագրութիւնն խնդրում է արժանապատիւ գործակալներից Աբարատի համարները ըստ կարելոյն փութով հասցնել յարգելի բաժանորդներին, որպէս զի խմբագրութիւնս ըստիպուած չը լինի զանցառուների ցուցակը տալ։

Ե-ղ-պ-ր-ք-ա. Պ. Ս. Զ. Ձեր յանձնարարութիւնները կատարեցինք։